ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2016 թվականի N 1229 - Ա

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆԻ, ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆԻ ԵՎ ԷՐԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 3-րդ ենթակետի՝

1. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մաքսատուրքերի վերաբաշխման միասնական սկզբունքի կիրառման հարցի մասին» և «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ալկոհոլային արտադրանքի և ծխախոտի ակցիզային հարկերի ներդաշնակեցման մասին» համաձայնագրերի նախագծերի վերաբերյալ քննարկմանը մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Դավիթ Անանյանի ու Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի օգնական Էրիկ Գրիգորյանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 5-6-ը Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) գործուղման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի

Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

2. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին՝ եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 19
Երևան